Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Մովսիսյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 13-ը:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի Միջազգային Հիմնադրամ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Fiscal Policy Analysis (FPA)/Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն» թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել հարկաբյուջետային քաղաքականության մշակման հմտությունները, ծանոթանալ վերջինիս վերլուծության ժամանակակից մեթոդներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության վերջին միտումները.

- տնտեսության առկա վիճակը գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում,
- բյուջետային հիմնախնդիրները և գերակայությունները:

2) Հարկաբյուջետային քաղաքականությունը և մակրոտնտեսական կայունացումը.

- հարկաբյուջետային քաղաքականությունը և մակրոտնտեսական կայունությունը,
- հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխկապակցվածությունը:

3) Մասնակից երկրներում առկա բյուջետային հիմնախնդիրների քննարկում:

4) Հարկաբյուջետային հաշվառում.

- հարկաբյուջետային հաշվառման համակարգը,
- պաշարներ և հոսքեր,
- հաշվեգրման և դրամարկղային մեթոդները:

4) Հարկաբյուջետային քաղաքականության ուղղվածության գնահատականը.

- կառուցվածքային հաշվեկշռի որոշումը,
- բյուջեի էլաստիկությունը և հարկաբյուջետային քաղաքականության ուղղվածությունը:

5) Բյուջետային մուլտիպլիկատորները և նրանց մեծության և կայունության վրա ազդող գործոնները:

6) Եկամուտների հավաքագրում:

- ընդհանուր սկզբունքները և այդ ոլորտում իրականացվող քաղաքականության վերջին միտումները,
- հարկային քաղաքականության բարեփոխումները,
- եկամուտների հավաքագրման կառավարումը:

7) Ծախսային քաղաքականություն.

- ծախսերի տեսակները,
- ծախսերի օպտիմալացումը,
- ծախսային քաղաքականության խնդիրները (ցածր եկամուտ ունեցող և զարգացող երկրների օրինակով):

8) Պետական ներդրումները և տնտեսական զարգացումը.

- պետական ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա,
- պետական ներդրումների արդյունավետությունը,
- պետական ներդրումները և բյուջետային կայունությունը:

9) Բյուջետային ծրագրավորում.

- Հարկերի արդյունավետ դրույքաչափի, դինամիկայի և ճկունության վրա հիմնված մեթոդներ,
- դիսկրետ և ոչ դիսկրետ ծախսեր,
- բյուջեի ֆինանսավորման կարիքները:

10) Բյուջետային կայունություն.

- բյուջետային կայունության կոնցեպտը,
- պարտքի դինամիկան և դրա վրա ազդող գործոնները,
- պարտքի կայունության վերլուծության շրջանակները:

11) Հարկաբյուջետային քաղաքականությունը և ներառական աճը.

- Հարկաբյուջետային քաղաքականությունը և երկարաժամկետ աճը,
- Հարկաբյուջետային քաղաքականության դերը և ներառականության ազդեցությունը:

12) Հարկաբյուջետային քաղաքականությունը և կլիմայի փոփոխությունները.

- կլիմայի փոփոխությունների ազդեցությունը բյուջետային կայունության վրա,
- պետական եկամուտների և ներդրումների պլանավորումը՝ կլիմայի փոփոխությունների հաշվառմամբ:

13) Էներգետիկ սուբսիդավորման բաեփոխումները:

14) Հարկաբյուջետային քաղաքականությունը և գենդերային անհավասարությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ընդհանուր առմամբ դասընթացը հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ:

Դասընթացի ժամանակ ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (պայմանական տնտեսությունների օրինակով), որոնց ընթացքում պարզաբանվել են հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկություններն ու խնդիրները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ՝ կոնկրետ երկրների օրինակներով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ստացված գիտելիքները օգտակար և կիրառելի կլինեն եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության մշակման ընթացում հարկաբյուջետային քաղաքականության վրա ազդեցությունը առավել ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Ստորագրությունը, ամսաթիվը:

18.09.2024թ.